



ՀԱՅԿԱՅԻՆ ԵՐԱՅԻՆ

ԵՐԱՅԻՆ ԵՐԱՅԻՆ

ՆԱԽԵՐԵՎ ՏՈՐԻ

ԹԻՎ 34

11/24 Փետրուար 1912

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ՀԱՅ

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԴԱՆԳ», Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի պատշտական Շաբաթաբերը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոց.գ ամէն լուրերն՝ համապատասխան. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերքեր կարդալու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ

Թուրքիոյ համար:

Տարեկան. Դնէկ. արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արտասահման.

Տարեկան. Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանդատ-Բոսորդի եւ կամ մէյ մէկ դրոնոց նամակադրութով:

Մէկ քիւ 1 Դահէկան

Նամակ. յօդուած, եւն. կը դրուին խմբաւորութեան հասցիին.
ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԴԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
Իերա Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

Patriarcat Arm. Catholique

Péra Constantinople

- ԾԱՆՈԹ. 1 — Այս-է-է կը հրատարակուի Շաբաթ օրերը:
2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ո եւ է յօդուած:
3. — Ձեռագիրներ ետ չեն դարձուիր:
4. — Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:
5. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին:

Թիւ 5996

Տէր

Մեր Կ. Պատրիարքարանի պաշտօնական թերթն, «ԿԱԹՈՂԻԿԷ ՈՐԶԱԳԱՆԳ»ը, Տեառն յաջողելով. սկսաւ հրատարակուիլ ի Կ. Պոլիս, աւելի մեծ ծաւալով ու ճոխ բովանդակութեամբ, ինչպէս տեսաք Ձեր ղրկուած թիւերէն: Կարողիկէ Ս. Կրօնիս համար Ձեր տածած սերն ու եռանդը քաջ գիտնալով, ներկայիս կը խնդրենք որ հանիք շարունակել Ձեր բաժանորդագրութիւնը եւ ծանօթացնել Ձեր շուրջը որպէս զի այս օգտակար թերթը կարելի եղածին չափ տարածուելով, սպասուած օգուտն ու նպատակն արդիւնաւորի:


Եւ հաւատսեօք սիրոյ եմք

Տեառնդ

Աղօթաբար

† ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԷՐԶԵԱՆ

Կ Պտրք. Տանն Կիլիկիոյ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՎ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՀԱՐԱԹԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ Տարի

11/24 Փետրուար 1912

Թիւ 31

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ ՎԵՐԱՂԱՐՁԸ

ԴԵՊՐԵՆՑ ԹԵՄԵՐԸ

Այս վերնագրի տակ Osservatore Romano թերթը հետեւեալ յօդուածը կը հրատարակէ:

«Երեք օր առաջ պատմեցինք թէ Ինչպիսի ցնծագին ընդունելութիւն գտած էր Ատանայի Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսը իր ժողովուրդէն՝ Հռոմի գումարուած Սինոդոսի մասնակցելէ վերջ իր թեմը վերադառնալուն: Սպասելով որ նման ցնծագին ընդունելութիւններու նորանոր լուրեր հաղորդելու միջիթարուլթիւնն ունենանք, և մինչ այս Սրբազան Հովիւներն իրենց աթոռները կը վերադառնան, պատշաճ կը թուի մեզի իրազեկ ընել ընթերցողները հայկական խնդրոյն՝ որ վերջին ամիսներս այնքան խօսել աուաւ իր վրայ, և որու մասին անշուշտ բաւական յստակ դադափար մը չէ կազմուած:

Եւ այս այնքան մեծ հաճոյքով կ'ընենք՝ որքան ստիպուած կը տեսնենք ինքզինքնիս՝ այդ առթիւ խօսելու նաեւ երկու կարեւոր յիշատակագրերու մասին՝ որոնք կրնան թանկագին վերջաբան մը նկատուիլ նորոգ գումարուած հայկական Սինոդոսին, և որք կը ծառայեն մեծ լոյս մը սփռելու անոր կատարած աշխատութեանց վրայով, ու միեւնոյն ատեն կուռ ու ճշգրիտ գաղափար մը տալու հայկական անցուղարձին:

Այս երկու յիշատակագրերը՝ երկու խիստ կարեւոր թուղթեր են, զորս Սինոդական Հայագրի Եպիսկոպոսները դեռ Հռովմէ չմեկնած՝ ուղղած են Հայ-Կաթողիկէներու: Այսօր միայն առաջին թուղթովը պիտի զբաղինք, իսկ երկրորդի մասին կը խոստանանք առաջիկային ուրոյն յօդուածով մը երկարօրէն խօսելու:

*
* *

Այս առաջին նամակը՝ զոր ստորագրած են Պատրիարքն ու Սինոդական տաճնեւութ Եպիսկոպոսները, կէտ նպատակի ունի իրենց ազգակից կաթողիկէներու ծանօթացնելու թէ ինչ նպատակաւ կազմած են Սինոդոսը, և թէ՛ որպիսի են իրենց առած որոշումներն ու դժած միջոցները:

Հայագրի Եպիսկոպոսները կ'ըսեն թէ, Հայ-Կաթողիկէ Ժողովուրդին կրօնապէս դժուարին մէկ ճգնաժամին մէջ, իրենք ի Սինոդոս գումարուած են միասին քննելու համար թէ ինչ որոշումներ կրնան առնուլ եկեղեցւոյ ամէնէն կարեւոր խնդիրներու մասին: Եւ իրենք սա պատճառաւ ուղած են Հռովմ հաւաքուիլ որ, քանի՛ ծանր էին ուսումնասիրելիք խնդիրները, և քանի՛ դժուարին կը թուէր Եկեղեցւոյ դիրքը, նոյնքան ալ պարտաւորիչ համարած էին սեղմօրէն համախմբուելու կաթողիկէ միութեան կեդրոնին, աղբիւրն ամէն կենաց և ամէն հոգեկան ոյժի, ներշնչուելու ճշմարիտ ակնադրութէն և վերանորոգելու իրենց ոգին Առաքելական Գահուն հաւատքովն ու աննկուն վարդապետութեամբը:

Եւ անոս ասոր համար անոնք հաւաքուեցան յաւիտենական Քաղաքին, Կաթողիկէութեան ոստանին՝ Հռովմի մէջ՝ ուր կը նստի ընդհանրական Եկեղեցւոյ գլուխը: Ասի լաւագոյն երաշխիք մըն էր իրենց ու բոլոր Հայ-Կաթողիկէներուն՝ ինչպէս նաեւ ձեռնարկուելիք գործուն և անոնց յաջողութեամբ պատկուելուն համար՝ զոր կը բաղձայ ամէն բարի Կաթողիկէ: Մինչ այսպէս վերջանալու կը մօտենան իրենց աշխատութիւնները, իրենց սրտերը կը խայտան, կ'ըսեն անոնք, սուրբ ցնծութեամբ մը, և աւելի բուռն սիրով մը կը արտփեն իրենց հաւատացեալներուն, ու բոլոր Ս. Եկեղեցւոյ սիրովը:

Յետոյ կը վերջիչեն Սինոդոսի բացումէն առաջ Ս. Քահանայապետին իրենց ուղղած դեղեցիկ և յուզիչ խօսքերը: Եկեղեցւոյ ու Հայ հա-

մայնքին համար զգացած իր հայրական չահագորգութիւնը, իր բուռն իղձը արմատախիլ ընելու իրենց մէջէն երկպառակութեան ընձիւղները, հանդարտելու կարգերը, զօրացնելու եկեղեցական կարգապահութիւնը, նուիրագործելու իրենց աւանդութիւններն ու օրինաւոր սովորոյթները, գծելու իրենց պարտականութիւնները, վերջապէս իր տաճած այն յոյսերը՝ թէ ազգային Սինոդոսը պիտի օգնէր իրենց ի գլուխ հանելու այս ամէնը։ Այս է, տհա, կ'ըսեն Ս. Հայրապետները Սինոդոսական ժողովոյն, ամէնէն վճռական պատասխանը զոր կրնանք տալ ամէն անոնց՝ որոնք կ'ամբաստանեն թէ Հռովմ ոստակոխ կ'ընէ իրենց ազգային առանձնաշնորհումները, և որոնք հայրենասիրութեան երեւոյթին տակ ըմբոստութեան բոցը կը բռնկցնեն։

«Ո՛հ, կ'ըսեն հայ եպիսկոպոսները՝ իրենց հաւաքական թուղթին յուզիչ նախաբանին վերջերը, ո՛հ, եթէ ստոնք կարենային տեսնել թէ ինչպիսի ազատութիւն չնորհած է մեզ Ս. Քահանայապետը, ի՞ր իսկ թեւքն, ի՞ր իսկ ընակավայրին սրտին մէջ, թոյլատրելով մեզի որ ազատօրէն կատարենք մեր եկեղեցական հանդէսներն իրենց բոլոր շքովը, գումարելու մեր ժողովներն ու սինոդոսական նիստերը, չնորհելով մեր Պատրիարքին նոյնիսկ Հռովմի մէջ նախագահելու այս խաղաղասիրական հաւաքոյթին։ Այժմէն ուղեցինք յայտնապէս հրատարակել այս բանը՝ որպէսզի իմացնենք թէ ինչպիսի փափկանկատութեամբ կը վարուի մեզ հետ Ս. Գահը։»

Նամակը յետոյ կ'անցնի պարզելու առաջին գլխոյ մը մէջ՝ թէ ինչ գլխաւոր խնդիրներ նիւթ հայթայթած են իրենց սինոդոսական որոշումներուն, և որք ընդհանրապէս խմբագրուած են հաւատքի ուսուցման, իր ճշմարտութիւններու կարեւորութեան, բանին ու հաւատքի համաձայնութեան մասին ընդդէմ արդիականութեան ու բանականութեան։ Եւ կամ սրոյշելու սրբազան ծէսերու ուսուցումը, եկեղեցական արարողութիւններու միօրինակութիւնը, և արժարժելու հաւատացելոց սրտին մէջ անոնց հանդէպ ըլլալիք յարգութիւնն ու բարեպաշտութիւնը։ Նաեւ այս մասին ալ կորովի կերպիւ կը մերժեն Եպիսկոպոսները այն եպիսկի բաւբասանքն՝ ըստ որում թշնամի կը ներկայացնեն զՀռովմ իրենց ծէսին, մինչ ատոր հակառակ, ոչ միայն Հռովմ չի գոհանար զայն պաշտպանելէ, այլ նոյն իսկ անոր վրայ կը տարածէ իր պաշպանութիւնն ու մայրական գուրգուրանքը։

Երկրորդ գլխոյ մը մէջ յիշուալ յոյժ կարեւոր թուղթը կը խօսի եկեղեցական ու քաղաքական գործերու եպիսկոպոսներու և հաւատացեալներու փոփոխակի յարաբերութիւններու մասին կրօնական սկզբանց համաձայն միշտ քննելով զայնս, որ մասին զբաղած էր Սինոդոսն ալ։ Հոս կը բացատրուի եպիսկոպոսները և եկեղեցական պաշտօնականներու ընտրութեանց մէջ եկեղեցւոյ ունեցած բացարձակ իրաւունքն, և թէ ինչ-

պէս պէտք է ըմբռնել սոյն ընտրութեանց մէջ Ս. Գահին առանձնաշնորհութեամբ ժողովուրդին տրուած միջամտութեան իրաւունքը, նոյնպէս կը խօսի եկեղեցւոյ բացարձակ իրաւանց մասին իր սեփական կալուածոց վերայ, նոյնիւրը յանձանձկուէ կերպին և եղանակաւորման վրայ, թէ՛ որքան անհրաժեշտ է կղերին անկախութիւնը, Պատրիարքին պատասխանատուութիւնը եկեղեցւոյ և կառավարութեան հանդէպ, Ազգին օգուտը եկեղեցւոյ ազատութիւնէն, և այն տխուր հետեւութիւնները որոնք յառաջ կու գան եթէ երբեք ժողովրդային կամաց սարուէն ըլլայ եկեղեցին: Սոյն կարեւոր յիշատակագիրը կը վերջանայ ջերմ ու սրտագին կոչումով մը հաւատացելոց ուղղուած՝ որոնց կ'ըսեն եպիսկոպոսները թէ ապահով են որ զուր ակն չեն ուղղած իրենց ճշմարտութեան լեզուն, և թէ՛ վստահ են որ ալս ճշմարտութիւնը հաստատմատ պիտի ամրանայ իրենց ոգիներուն մէջ, և աւելի զօրաւոր պիտի հանդիսանայ քան խաւարի իշխանութիւնը:


*
* *

Երկրորդ թուղթին գալով, ուսկից կարելի է յստակ գաղափար մը կազմել արդի Պատրիարքին Ամին. Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեան կաթողիկոսի ընտրութենէն առաջ կամ վերջը և կամ ընտրութեան պահուն տեղի ունեցած ծանրածանր իրադարձութիւններու մասին, ի մօտոյ ուրոյն յօդուածով մը պիտի ղրաղինք ինչպէս վերը զուրցեցինք:



ԱԶԱՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԻՐԵՆ ՄԷԿ ԹԱԳՐԻՐԸ



Ներկայ խնդիրներու իբրեւ հիմ կը բռնուի երջանկ. Ազարեան Պատրիարքին հակահասուներանց դարձին առթիւ գոյացած համաձայնութեան վրայօք 9 Ապրիլ 304 (1888) թուականու Արդարութեան նախարարութեան մատուցած թագրիրը, որուն մէջ այլ և այլ կէտեր նշանակուած են իրր գործ առնելայ և որուն համար կ'ըսուի թէ Իրասոէ ևս ելած ըլլայ, մինչդեռ Իրասոէն՝ գոյացած միութեան մասին արքայական գոհունակութեան հաղորդուելուն համար է: Եւ որովհետեւ թէ՛ այս թագրիրը և թէ՛ անկէ ծագում առած կանոնագրի ծրագիրը յօրինուած էին առանց Սինոդոսի, առանց և ոչ իսկ եպիսկոպոսներու առանձնական տեղեկութեան, առանց նոյն իսկ գիտութեան Լեւոն ԺԳ. Քահանայապետին և Հռովմայ պաշտօնատանց, ոյր վասն նոյն երջանկայիշատակ Լեւոն ԺԳ. Քահանայապետն մասնաւորապէս կարգած էր ծիրանաւորաց յանձնաժողով մը, այս թագրիրին ու անկէ ծագում առած կանոնագրի ծրագրին հոգեւոր մասերուն մանրամասն քննութիւնը կատարելու համար: Այս քննութեանց արդիւնքը եղաւ յիշեալ վաւերաթղթիւն հոգեւորական մասին եղած անճշգրտութիւնները ուղղելու պէտքին որոշողութիւնը: Հետեւաբար, հրամանաւ Լեւոն ԺԳ. Քահանայապետին մասնաւոր նամակներ գրուեցան յիշեալ Ազարեան Պատրիարքին որոնց մէջ գործուած այդ վրտանգաւոր անճշգրտութիւնները ցոյց կը տրուէին իրեն մի առ մի և կը հրաւիրուէր զանոնք ՈՒՂՂԵՆ, մանաւանդ թագրիրին վերաբերմամբ, և այս ամէնը ի պարօնէ՝ ծանուցանել եպիսկոպոսաց:

Բարեկիշ. Ազարեան Պատրիարքը համոզուելով բարձրագոյն ազգարարութեան և աւելի հանդիսաւորութիւն տալու համար սրբազրութեանց, գումարեց 1890ի Պատրիարքական Սինոդոսը, և անոր մէջ ամէն կէտերը խորապէս ուսումնասիրուեցան և ըստ այնմ ըստ եկեղեցական կանոնաց հարկ դատուած սրբազրութիւնները կատարուեցան, և այնպէս ծանուցուեցաւ Սր. Քահանայապետ Լեւոն ԺԳ. ի որ այս աշխատութիւնէն մեծապէս գոհ մնաց: Իսկ Ազարեան Պատրիարք, իր նախկին թագրիրին (9 Ապրիլ 304) մեկնուելու եղանակէն յառաջ եկած և գալիք չարեաց առջեւն առնելու համար, խղճի պարտք սեպեց կայսերական կառավարութեան մատուցանել ՆՈՐ ԹԱԳՐԻՐ մը, յորում, կ'ուղղէր սրբազրելի բո-

լոր կէտերն և կ'ուզէր որ իր այս նոր թագրիւր կցուի առաջինին և այնպէս պահուի, զի առկից վերջը ինքն և իր յաջորդները ըստ այս նոր թագրիւրի սրբազրութեանց պիտի վարուին: Եւ յիշուաւ այ ինքն իր պատրիարքութեան օրով և իր յաջորդները, այս սրբազրութեանց գործադրութիւնէն բնաւ չհեղեցան:

Կը տեսնուի ուրիմն Աղարեան Պատրիարքի այս ՆՈՐ ԹԱԳՐԻՐԻՆ աւագ կարեւորութիւնը արդի խնդիրներու նկատմամբ, անկէ յայտնի պիտի ըլլայ թէ ո՛չ Պատրիարք, ո՛չ Սինոդոս նոր բան մը չեն պահանջիր, և թէ Աղարեան Պատրիարքն ալ ճիշդ իրենց պէս խորհած է, որպէս և հրամայած է Լեւոն ԺԳ. Քահանայապետը, ուստի ոչ Լեւոն ԺԳ. ոչ Աղարեան Պատրիարք այժմու ապօրինաւոր պահանջանաց ջատագով կամ ընդունազ հղած չեն, և անոնք որ հակառակ են այն սկզբանց զոր կը պաշտպանէ արդի Կ. Պատրիարքը և կը հրամայէ Պիոս Ժ., նովին գործով հակառակ են Աղարեան Պատրիարքին և Լեւոն ԺԳ ին:

Ուստի նկատի առնելով այսքան կարեւորութիւնը, Արշագանգի մէջ կը հրատարակենք Աղարեան Պատրիարքի այս նոր թագրիւրը ի շինութիւն գայթակղեալ մտաց և ի խորհրդածութիւն ուղղամիտ անձերու:

Տէվլէթլու էֆէնտիմ հազրէթլէրի,

Ֆի 9 Նիսան 304 թարիխ իլէ նէզարէթի ճէրիլէրինէ թագաւիմ զըլընան թագրիւր տախանէմին մէջը միւնտէրիճաթընա թէվֆիզէն պուռնտան ազտէմ մէճլար միւթէպէրանը միլլէթտէ ևէթմիլ տէօթ պէնտտէն իպարէթ օլարագ թանգիմ էտիլիպ թարաֆը հիւքիւմէթի Սէնիյէտէն թաստիգ օլունմագ իւզրէ, հէնուզ թագաւիմ զըլընամըջ օլան նիլումնամէի միլլէթի տախանէմ լայիհասը պու տէֆա Տէրսատէթտէ թէճէմմիւ էտէն տէրիսգորոտան վէ բիսգորոտան Սինոդունտա ումուսի ճէմաթա միւթէպիլիգ օլաճագ պէօյլէ պիր նիլումնամէ թանգիմի իչիւն պապէրաթը ալիշան թաստիգ պույրուլմուջ օլան մէրխասալարըն տախի բէյլէրինին իսթիհասը լիւզոււմը մէզքիւր Սինոդտա տէրմիյան օլունտըլը վէ կէրէք պուլատէ զիքրի սէպգաթ էտէն թագրիւր տախանէմին վէ կէրէք անըն մէալի միւնտէրիճաթը էստիյէտինէ թէվֆիզէն միւթէպէրան մէճլիսիտէ թանգիմ զըլընան նիլումնամէնին չամիլ օլաուզլարը պազը մատտէլէր հազըլնտա իլէրուտէ սուի մանալար վէրիլմէմէսի վէ թանգիմ էտէնլէրինին էֆէրարը հասէնլէրինէ մուզալիր օլարագ մէվզըրի իճրայէ գօնուլմամասը իչիւն մէզքիւր մատտէլէր հազըլնտա Սինոդա վէրիլէն աթիտէ միւնտէրիճ իյլահաթըն պաթագրիթ թարաֆը ալիի նէզարէթրէնահիլէրինէ արզ ու պէյանը թէնսիպ կէօրիւլմիւլ տիր, չէօյլէ քի,

Էվվէլա, մէզքիւր թագրիւր տախանէմաէ հէր նէ գատար «Էրֆէնի Գաթօլիք Գիւնէսի ագաթի» լուղէթլէրի իսթիմալ օլունմուշ իսէ տէ, ագաթա լուղէթի ետլընդ ախնէ ախտ օլուպ միլլէթէ ախտ օլմատըղընտան «Գաթօլիք տիյանէթի վէ Էրմէնի Գաթօլիք քիլիսէսի ուսուլ վէ ստաթը» տէնիլմէսի:

Սանիյէն, բիսգորոս ինթիխապը հագգը միւնհասըրէն Սինոգա ախտ օլտուղընտան, միւնհալ քիւրսիւլէրին ըհապիյն վէ ալամը մէճլիսլէրի թարաֆընտան թանրիւր իտիլէն բուսուլա թագրիւրը մէզքիւրաէ ինթիխապ բուսուլասը տէնիլ իսէ տէ, ինթիխապ լուղէթի եէրինէ նամղէտ թէֆրիզի վէ ետխոտ հիւսնիւ շահատէթ բուսուլասը տէնիլմէսի:

Սալիսէն, սէրբիսգորոսան վէ բիսգորոսան հախօտ մէրխասալարըն վէ մուալին բիսգորոսըն պիր գուսուրը վուգուընտա բունհանիյէնէ ախտ պիր քէյֆիյէթտէն տօլայը իսէ անըն թէտգիզ վէ իճրայը իճապը սէլահիյէթ վէ հիւքիւմէթի բունհանիյէնէ ախտ օլարըը միսիլիւ, տիւնեհլիյէնէ ախտ քէյֆիյէթտէն տօլայը վուգու պուլան խաթանըն թէտգիզինէ միլլէթ վէ ալամ մէճլիսլէրին, հէր նէ սուրէթտէ օլուր իսէ, միւտախէլէսի պապէրաթը ալիշան նախ օլարըլարը իսթիյազաթը Շահանէ ահքեամը միւնիֆէսինէ քիւլիյէն մուղայիր օլտուղընտան, իսթիյազաթ ահքեամը մուճիպինճէ մուսամէլէ օլունահաղը տէրքեար օլուպ թագրիւրը տախանէմին օ չըգգը՝ մուճիպինճէ թասհիճ օլունմասը:

Բապիէն, քէզալիք Բաթրիզ հագգընտա վուգու պուլաճագ չիքեալթ ումուրը տինիյէնէ միւթէալիք պիր քէյֆիյէթտէն տօլայը իսէ, Գաթօլիքլէրին ըհիսի էքրէմինէ ախտ օլարըը միսիլիւ, ումուրը տիւնեհլիւ վիյէնէ միւթէալիք վուգու պուլաճագ չիքեալթին հալ ու թէալիյէսի հաիզ օլարըը պէրաթը ալիշան ահքեամը միւնիֆէսի մանթըղընճա վէ հաիզ օլարըը իսթիյազաթա թէվֆիզէն մուսամէլէ օլունուպ Սինոգ վէ միլլէթ մէճլիսլին միւտախէլէնէ հագգլարը օլմատըղընտան մուճիպինճէ պու չըգգըն տախի թասհիճի:

Խամիսէն, Սինոգճա ինթիխապ օլան բիսգորոսանըն սըֆաթը բունբունհանիյէնէ նասպ ու թային օլտուղլարընը շամիլ գանունէն վէրիլմէսի լաղըմ կէլն կոնգալըն իթասը Բաթրիզին պաչըճա պիր իսթիյազը օլուպ թագրիւրի մէզքիւրաէ զիքր օլունմամը օլտուղընտան պունըն իլավէսի վէ միւնհալ քիւրսիւլէրէ ինթիխապ օլան ըհապիյնին մէրխասալըզ սըֆաթընըն պապէրաթը ալիշան թարաֆը հիւքիւմէթի Սէնիյէտէն թաստիզի լաղըմ կէլտիկի միսիլիւ, ըհապիյնի մումաիլէյհիւմին բիսգորոսլար մէսնէտի բունհանիյէլէրինտէ իճրաի մէրասիմի բունհանիյէլէրինտէն Էվվէլ Գաթօլիք Բիլիսէսինին ըհիսի էքրէմի թարաֆընտան թաստիզ օլունմալարը լաղըմ կէլտիկիտէն, պունըն տախի զիքրինին իլավէսի:

Ստտիսէն, «Կաթիզիկոս» հուգուգընըն զիքրի սըրասընտա մին էլ գատիմ շարգ բաթրիզիկինէ ախտ քեաֆֆէի հոգուգը հաիզ վէ իսթի-

մալա միւզթէտիր» տէնմիշ իսէ տէ, կաթողիկոսարն հուզուզ վէ ուսուլը ինթիխապը ազախտի տինիյէ կիսի լայէթթէզայլիւր օլմայըպ՝ պիր սիյազաա գալմամը օլաըլը թալիխէ տախի միւսպէթ օլարագ, վազըթ վազըթ թաաաիլ օլմուշ վէ պիր թազըմը տախի իսլիալ օլմուշ օլաուզընստան, պունդարըն շիմտի իսթիմալը նապէճա խաուկի վէ ղէմանը գաախիմ տէ կաթողիկոսար Սինուգա սօրմազարընը բիագորտոյարը ալլ վէ քիւրսիլէրի ֆէսիս վէ պունա միւսաալը պիր թազըմ հուզուզ իսթիմալ էթմէքտէ իմիլէք իսէ տէ, մուսխիսէրէն հէր սէլաիյէթին պիր թաշիլը մազպուլթիյէթ վէ ինթիզամա կիրմիշ օլաըլը միսիլիւ, կաթողիկոսըզ հուզուզ վէ իսթիյալը տախի թաշիլը նիզամա ալընմը օլաուզընստան լիզուլմընա կէօրէ պազը մէվաաաը մուհիմէի քիլիսիյէնին Սինուգա վէ մէվաաաը մէզքիւրէ էհէմմ օլաըլը սուրէթատ գաթօլիքլիյին բէխի էքրէմլինէ միւրաճաաթ էթմէք լիզուլմը գալմանիյնի էսաաիյէի տինիյէմիզտէն պուլունսաըլընստան, չըգը մէզքիւրտէ միւնթէխաալ Բաթրիգ աէրհալ քիւրսիւսինէ գուուա վէ տիւսթուր իւլ ամէլ վէ մէրի իւլ իճրա օլան քեաֆֆէի հուզուզ վէ փաթիյազաթը հաիզ վէ իսթիմալէ մուզթէտիր տիր աէնիլմէքլէ իյզանընըն լիզուլմը.

Սապիէն, միւնթէխաալ կաթողիկոսըն Բարա հազրէթլիլնաէն թաաաիլի իշիւն բուհանի թաաաիլի տէնմիշ իսէ տէ, ալինիմիզ լիսանընճա բոհաի, սըք բուհա եախսոս բապալի թէալիյէ միւթէալլիզ օլան խուսաւարտա իսթիմալ օլունուալ, կաթողիկոս թաաաիլիտէ իսէ (գանձիլք) եանի սըֆէթի բուհանիյէսինին գանուէն թաաաիլի տէնիլմէսի լազըմ կէլաիկի.

Սամինէն, կաթողիկոս վէ Բաթրիգ իշիւն Պապը Ալիտէն վէրիլէճէք էվաաիլը վէ վէսախանըն թէնֆիլը ահքեամընա մէմուր սըր տէնիլմիշ իսէ տէ, չըգը մէզքիւրտէ Բաթրիգին սըֆաթը բուհանիյէսինտէն տախի պահա օլունմը օլաուզընստան վէ հիւքիւմէթի Սէնիյէ իսէ ումուրը բուհանիյէյէ գաթան միւսաախէլէ էթմէտիկինտէն չըգը մէզքիւրըն սըֆաթը բուհանիյէսինէ ախա օլմայըպ բաթրիլլիք մէմուրիյէթի հազգընտա սնլաշըլաճազընըն իյզանը.

Թիւաէն, ճէմաաթըմըզ գապրիսթանը հազգընտա օլան պէնտաէ, ճանիլպի Պապը Ալիտէն թէսիլ պուլուլմը օլան նիզամիւսմէի մախսուս մուճիլլինճէ իտարէ օլունուր տէնմիշ վէ գապրիսթանլար իսէ ալինիմիզճէ մուազլէզ պիր մահալ աաա օլունուալ օլաաա պիր թազըմ քիլիսէ մէրաաիմի բուհանիյէ իճրաաը լազըմ կէլաիլնաէն, ճիհէթի իտարէի ճիւմանիյէսի նիզամաթը մէվզուէի Տէվլէթը Ալիյէյէ թէվֆիզէն իճրա օլունաճազը միսիլիւ, ճիհէթի բուհանիյէսի տախի իտարէի բուհանիյէյէ ալա օլաուզընստան, պէնաը մէզքիւրըն օլ վէճէլլէ իյզանը.

Աշիլէն, թազրիլը մէզքիւրտէ խալաթ վէ էմլաքը մէլլիյէտէն պահա օլունմը օլաուզընստան, իշպու էմլաք վէ խալաթ իքի գըմ օ-


լուս, պունդարտան պիր գըսմը Բաթրիգիսանէ վէ մէրխասախանէլէրճէ
խտարէ օլսըղը միսիլլիւ, գըսմը տիկէրի իսէ Կաթողիկոս վէ բիսգոքոսան
ըիյասէթի ըունանիլէրինէ վէ խտարէլէրինէ միւնհասըր պուլունսըղըն-
տան, պունդարա ալամ թարաֆընտան հիչ պիր սուրէթլէ միւտախէլէ օ-
լունմամասընըն գիքրի իլէ, իյգահը վէ իյգահաթը մարուզէի հալի իշպու
թագրիրը աճիզանէմին գիքր օլունան 9 նիսան 304 թարիխլի թագրիրը
սախանէմէ րապթ վէ պիրլէշաիրլիմէսի իլէ մուճլալինճէ հարէքէթ օլուն-
մասը խսուուարնա հիւմէմը ճէլլիլէի նէզարէթմէնահիլէրինին սէզաւար
պուլըրումասը իլէ պէրապէր թագրիրը սախանէմին գապուլինի հալի պիր
գըթա թէզքէլէի նէզարէթմէնահիլէրի թասթիւ պուլըրումասը նիյաղը
պապընտա:

23 թըշ. էվվէլ 1306

Երմեհի-Դաթոլիք Բաթրիգի վէ
Կիլիկիա Կաթողիկոսը
ՍՏԵՓԱՆ ՊԵՏՐՈՍ ԱԶԱՐԵԱՆ



ԱՆԿԻՐԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԵՒ ԼԻՎՈՒՆՈՅ ՔԱՂԱՔԸ



Հսեցինք որ Անկիւրիոյ նորընտիր Եպիսկոպոսն, Արհի. Գրիգոր
Գիւր. Պահապանեան, մեկնելու վրայ է Լիվոնոյէն, ուր տասն եւ վեց
տարիներ շարունակ իբր ժողովրդապետ պաշտօնավարած է ամենայն գո-
վութեամբ: Կ'ուզենք պահ մը զարթուցանել գեղեցիկ յիշատակներ. վըս-
տած եւք թէ պիտի չմեղադրուի իբրեւ յետամնաց: Բացարձակապէս զար-
մանալի եւ աննկարագրելի է այն համակրութիւնը եւ խանդավառ սէրը
զոր այս պարտաճանաչ, համեստ, անճնադոճ եւ հեզանդի քահանան չա-
հած է:

Լիվոնոյ եւ շրջակայք անխտիր՝ եւ բովանդակ բոցավառ սիրով յա-
րած է իրեն: Ամէնքն ալ կ'անուանեն զինք իրենց Գահճը, իրենց հրէշ
տակը, իրենց Միլիարու-Լիւնը: Եպիսկոպոսը Գահաբ կ'անուանէր զինքը:
Զարմանալի է որ ոչ ոք կը նախանձէր, ամէն մարդ կը սիրէր: Լիվոնոյի

Հայ Կաթողիկէ եկեղեցին բնաւ այնքան յաճախութիւն ժողովրդեան չէ տեսած ինչպէս իր օրով, խուռնընթաց կը դիմէին անդադար: Ոչ միայն հայոց այլ և լատինաց հոգեւոր հոգով կը զբաղէր քաղաքին մէջ, եպիսկոպոսին յանձնարարութեամբ: Արի ժողովրդապետի մը տիպարը կը նկատեն զայն: Տեղւոյն լատին Եպիսկոպոսն, Կանոնիկոսներ, ժողովրդապետներ, կղեր և ժողովուրդը գոգցեալ կը պաշտեն զինքը: Երբ լսեցին թէ եպիսկոպոս եղած է և իրենցմէ պիտի բաժնուի, սուգն ընդհանուր եղաւ և ամէնքը լացին: Որչափ մեծ փառք մեզի համար և որպիսի մխիթարութիւն, տեսնել որ օտարները խանդակաթ սիրով կը վերաբերուին մեր ընտիր անձնաւորութեանց և գիտեն յարգել անոնց արժանիքը: Արդեօք իր նոր պաշտօնավայրին մէջ այսպէս պիտի գնահատուի... յուսանք: Իսկ մենք մեր ակնարկածին չօչափելի սպառնացները կ'ուզենք տալ:

Արհի. Գրիգոր Գեր, Պատապանեան կըր Հռովմ եկաւ, դեռ Լիւվուռոցիք լուր չունէին թէ եպիսկոպոս պիտի ըլլար: Հագիւ լսեցին և ահա իրար անցան և նամակներ և հեռագիրներ սկսան տեղալ: Արհի. Եպիսկոպոսն քաղաքին՝ Գեր. Ճիանի, շնորհապաշտ նամակներ թուցուց, լիակատար ուրախութեամբ, խանդիւ և յարգանք լի. աճապարեց նաեւ շքեղ ընծայ մը նուիրելու, Սրբ. Քահանայապետին նուիրած ոսկեղէն աղնիւ լանջախաչին, նոյնքան գեղեցիկ ոսկեղէն չղթայ մը, ի մի ձուլելով երկու աղնիւ յիշատակներ: Յետոյ սկսան հրաւերներ: Սնապատճառ կ'ուզէին, կը պահանջէին որ ցորէկով մը մանէ ի Լիւվուռոյ, որպէս զի պարտ ու պատշաճ մեծարանքով ընդունին զինքը: Մերժեց նա: Աւելի հետապնդեցին, սկսան թախանձիլ. նամակներ հեռագիրներ ամբողջ կղերին կողմանէ: Նա միշտ դիմադրեց իր ծանօթ համեստութեամբը: Սինոդոսի աւարտումէն վերջը Դեկտ. 20ին հեռագիր մ'ալ հասաւ, զոր զրկած էր Գեր. Բէռա, յանուն համօրէն ժողովրդապետաց թեմին միեւնոյն խնդրումաժքով: Յետ խորհրդակցութեան, վերջին անգամ մըն ալ մերժողական հեռագիր տուաւ Գրիգոր Եպիսկոպոսը: Կը յուսար թէ այլեւս դադար կ'առնուն: Որչափ ի դերեւ յուսացած էր: Դեկտ. 22ին հասաւ նամակ մը, շտապաւ, գաղղիացի քահանայէ մը որ Գրիգոր Եպիսկոպոսին բարեկամն էր, հարկեցուցիչ նամակ մը, որոյ ընթերցումը վճռական եղաւ:

Յապուշ կրթեցան Սինոդական հարք այսքան ստիպիչ սիրոյ վրայ և Ամինապ. Հոգեւոր Տէրը մեծ պատիւ համարելով զայն իրեն և Սինոդոսին, որոշեց Գրիգոր Եպս.ին հետ մասնաւոր պատուիրակ մը զրկել քաղաքին եպիսկոպոսին, կղերին և ժողովրդեան շնորհակալ ըլլալու յանուն Պատրիարքին և Սինոդոսին: Եւ Գեր. Դէյուդ Գերպօ. Թէրզիպաշեանի հրամայեց կատարել այս պաշտօնը: Մենք այսօր պիտի հրատարակենք վերոյիշեալ նամակը, որուն հեղինակը չօչափած է համոզողական ամէն պատճառ. իսկ այս աննախընթաց ընդունելութեան նկատմամբ

գոհ պիտի ըլլանք Վրայն յառաջիկային թարգմանաբար զնիւ Լիվոնոյի Ֆլաէ՝ թերթին յօդուածը, որպէսզի իրենց զգայումները իրենք նկարագրեն, զի Հայ մը այս անարանին առջև չէր կրնար չյուզուիլ, տեսնելով այն աննկարագրելի մրցումը, քաղքի մը դժբաղդը, օտարներու այդ խանդը, սրտազեղ արտայայտումը, ցնծութիւնը և արտասուքները միանգամայն Ողջոյն այն աղնիւ հոգւոյն որ արժանացած է այսքան սիրոյ :

Լիվոնոյ 21 Դեկտմ 911

Արհրապատիւ Գերապայծառ Տէր,

Ինչ մեծ պատիւ կը համարիմ որ թախտ կ'ունենամ ներկայիւս ձեզ ներկայանալու, նկատելով որ դիւրութիւն ունիմ ձեզ հետ յարաբերուած թիան մտնելու, ի դիմաց բոլոր ժողովրդապետաց քաղքիս. և նոյնիսկ կրնամ ըսել՝ Արհ. Գերպծ. վիճակաւորին կողմանէ կը գրիմ ձեզ :

Տեսակցեցայ Գեր. Էճիտիօ Բէռայի հետ որնոր արդէն հեռագրած է ձեզ, բայց հեռագրի միջոցաւ շատ դժուար ըլլալով բացատրել ամէն ինչ, կուգամ ներկայիւս աղաչելու, թախանձելու, խնդրելու որ նկատի առնէք այն ամէն պատճառները որոնք կը նպաստեն իր առաջարկին :

Անօգուտ է ձեզմէ պահել, և մանաւանդ դուք ձեզմէ արդէն գուշակած էք. ուստի մտերմաբար կը գրիմ ձեզ պէտք եղածէն աւելին որպէսզի ըստ այնմ վարուիք : Կլերական դասը կը փափաքի ձեր աստիճանին արժանավայել ընդունելութիւն մ'ընել. անշուշտ դուք չի պիտի ուզէք որ գերապայծառ Պահապանեան պատուուի, շատ լաւ. հոգ մի՛ ընէք, յարգ և պատիւ ձեզ համար թո՛ղ չըլլայ, այլ ձեր եկեղեցական արժանապատուութեան :

Մասնաւորապէս պատրաստած են քանի մը ընծաներ զորս ձեր գալստեան պիտի նուիրեն պաշտօնապէս խմբովին, և դուք անշուշտ, գոհնէ ձեր եկեղեցւոյն մէջ չի պիտի կարենաք արգելիլ զայն. բայց դեռ հոս չի լմնար :

Համերաշխութեան գեղեցիկ օրինակ մը և մանաւանդ Լպիսկոպոսական արժանապատուութեան յարգանաց ապացոյց մը տալու համար անհրաժեշտ պէտք է որ դուք յանձնառու ըլլաք որ զձեզ արժանավայել կերպով ընդունինք նոյն իսկ Լիվոնոյի կայարանը. Գերապայծառ Ճիանի անձամբ իսկ՝ ինչպէս ինչ մասնաւորապէս յայտնած է, անպատճառ կ'ուզէ զձեզ դիմաւորելու գալ ի կայարան, և յետոյ ընկերանալ ձեզ մինչև ձեր աւագ խորանը, ընդունելու հոն նախ Ասենատուրը Հաղորդութեան օրհնութիւնը ըստ հայ ծիսի և յետոյ ձեր հայրապետական նորաբաշխ օրհ-

հումթիւնը : Անկէ յետոյ պիտի յաջորդեն խմբովին և անհատական շնորհաւորութիւնները . այս ամէնը պիտի ըլլան առանց աղբուկի և չափազանց ցոյցերու ինչպէս որ դուք կը սիրէք :

Անշուշտ եկեղեցական համեստութիւնը պիտի այլալի այս բոլոր յարգանաց և սլաւելոյ ցոյցերուն առջեւ : Բայց դուք , սիրելի Գերապայծառ , ինձմէ աւելի լաւ գիտէք զանազանել բուն իսկ արժանիքը անձէն . եթէ դուք անձնապէս անարժան կըդատէք ինքզինքնիդ , որովհետեւ իրաւամբ ամէնքնիս ալ ենք «ծառայք անպիտանք» , բայց չէք կրնար դուք արդիւի որ Եկեղեցին յարգէ մեծարէ ըստ արժանւոյն իր պատուատիճանները , որոնք արժանի են մասնաւոր իր մեծարանաց :

Բաց ատի , ինդրեմ մտիկ ըրէք ինձ մինչեւ վերջ . եթէ զձեզ չընդունին արտաքին ցոյցերով , դուք պիտի զրկէք հաւատացեալ ժողովուրդը բարի օրինակէ մը . և որ աւելի գէշն է , թէ զձեզ և թէ բոլոր Լիվոնոյի քահանայական դասը խիտա քննադատութեան պիտի ենթարկէք : Նախ զձեզ , որովհետեւ պիտի ըսեն որ չէք քաջութիւր ցաւ պատճառելու գերապայծառ ձիւնիի և իր կղերին . յետոյ բոլոր քահանայական դասը . որովհետեւ պիտի ըսեն (և ո՞վ կրնայ ստնձել չար լեզուները) թէ չուզեցին կամ չի կրցան զձեզ արժանաւայել կերպով ընդունիլ : Թէկէրաֆ և Գաւաթէ-է՛ չար լրագիրները հաճութեամբ կ'սպասեն այսպիսի առթիւր :

Պատճառ պիտի բերէք ձեր քոյրը . զիտեմ , պիտի ըսէք թէ դըժուար կը ճամբորդէ ցերեկ ժամանակ , ասոր ալ ահա մէջոց մը . նախ Բիւլա կ'եկէք և հոն կը սպասէք պանդոկի մը մէջ կամ աւելի լաւ Ադամեան ընտանեաց քով , որոնք այնքան երջանիկ պիտի ըլլան ձեր վերադարձի երախայրիքը վայելելով , և հոն կը սպասէք դուք ցերեկ ժամանակի չոգեկաւքի մը կէս օրէ առաջ կամ վերջ . Բիւլայի և Լիվոնոյի մէջ հաղիւ 19 փարոսախ ճամբոյ կայ . այսքան քիչ տեղ եթէ ցերեկ ժամանակ ալ ճամբորդէք քոյրերնիդ բնաւ անհանդիստ չի պիտի ըլլայ : Հակառակ պարագայի եթէ կ'ուզէ շուտով վերջացնել ճամբորդութիւնը , չէ՞ք կրնար Հոովմէն մեկնիլ ժամը 8,35ին direct կամ espress չոգեկաւքով որով կը հասնիք ի Լիվոնոյ զրեթէ կէս օրէն վերջ ժամը երկուքին , այսինքն հինգ ժամէն . . . սքանչելի՛ ժամ , կատարելապէս ամէնուն սպասած և բաղձաւցած ժամն է : Ինչո՞ւ ուրեմն շաբաթ օր այդ ժամուն չի մեկնիք , այն օրը ամէնէն աւելի յարմար օրն է , որովհետեւ հեաւեալ օրը՝ կիրակի , Մենդեան ձրագալոյց ըլլալով ձեր բարեկամ ժողովրդապետները բնականապէս շատ զբաղած պիտի ըլլան . և յետոյ դուք կամ ձեր օղնականը՝ անշուշտ կ'ենթադրեմ որ ծով պիտի պահէք երկեղեան Ս . Պատարագը մատուցանելու համար , և այս ըստ իս , ճամբորդութեան յոգնութեան հետ շատ փափաքելի բան մը չէ :

Ուստի կը սպասեմ ձեր մէկ պատասխանին կամ հեռագրով կամ

գրութեամբ, բաւական է որ ժամանակ կարենամ ունենալ ծանուցանելու թէ Եպիսկոպոսարանի և թէ ձեր եղբայրակից ժողովրդապետաց:

Վերջապէս ամէն ջանք ըրէք. նոյնիսկ եթէ հարկ ըլլայ մեծ անձնազոհութեամբ՝ զմեզ գոհացնելու համար: Ձեզ բնաւ չի հրամայեցի և չապ կը ցաւիմ որ այսօր ձեր Արհիպատիւ Տէրութեան վրայ այդպիսի իշխանութիւն մը չունիմ. առանց ասոր ալ, ներեցէք յանդուզն արտայայտութեանս, խիստ կերպով կը պարտաւորեմ զձեզ որ ընէք զայս Աստուծոյ փառաց և մերձաւորին բարեաց համար:

Ինձ ուրիշ բան չի մնար եթէ ոչ թախանձել զձեզ որ ժխտական պատասխան մը չիտաք, Արհիպատիւ Եպիսկոպոսը պիտի ըսէ թէ՝ չի կրցայ եւ լաւ կատարել պաշտօնս, թէ չի կրցայ բանեցնել բարեկամական աղբեղութիւնս եւն. կարծ խօսքով, Լաֆօնթէնի Մառթէն իշուկը պիտի դառնամ զոր ամէնքը պիտի հարուածեն. և դուք ինքնին ամէնուն տհաճութիւն և դժգոհութիւն պիտի պատճառէք: Ձի կարծէք թէ արտաքոյ կարգի բաներ պիտի ընեն, քաւ լիցի, այլ լոկ փոքր ապացոյց մը պիտի տան պարտ ու պատշաճ յարգութեան:

Հուսկ ուրեմն կը փութամ համբուրել ձեր Սրբանուէր մատանին և օրհնութիւննիդ կը խնդրեմ:

(Շարդ-հակելի)

ՔՅԱՄԵԼ ԲԱՇԱԽ ՄԷՎ ՏԵՂ ԵՎԱԳԻՐԸ

Քաղաքական չրջանակներու մէջ բաւական յուզում յառաջ բերաւ նախկին վարչապետ և անուանի քաղաքագէտ՝ Քեամիլ բաշայի մէկ տեղեկագիր նամակն զոր նա գրած էր Եգիպտոսէն առ Վեհափառ Սուլթանըն, զոր և հրատարակեցին թերթերը: Այս նամակին մէջ Քեամիլ բաշան կը քննէ Օսմ. պետութեան արդի քաղաքական կացութիւնը և կը քննադատէ Իբրէհիմ Կուսակցութեան բռնած ընթացքը: Կ'ըսէ թէ Իթիհատի մարդիկը վարչագէտ չեն, և ըստ հետեւորդի կը վտանգեն թուրքիոյ գոյութիւնը և մինչև իսկ խալիֆայութիւնը: Այս ընթացքով երկիրը բաժանման վտանգի կ'ենթարկուի: Թուրքիա չի կրնար մնալ առանց դաշնակցի. և ամենէն ընական դաշնակիցն մեզի համար՝ է Անգլիա, որ հետը պիտի բերէ նաև զԳաղղիա և զԲուսիա: Համիտի օրով այս քաղաքականութեան չհետեւեցան, և մազ մնաց որ Բուսիկն ձեռքէ երթար:

զոր ազատեց Սահմանադրութիւնը: Սակայն և այնպէս Պօսնա-Հէրսէք կորսուեցաւ և Պուլկարիա անկախ թագաւորութիւն հռչակեց: Սահմանադրութենէն վերջը Իթթիհատը մեծ սխալ գործեց՝ ձեռք առնելով վարչութիւնը: ձեռքերն անփորձ էին, որով նախ Եւրոպայի հազիւ ուրեմն մեղի բացուած քաղկնիւն անմիջապէս գոցուեցան, վստահութիւնը վերնալով: ապա յառաջ եկաւ նոր յեղափոխութիւն և արիւնհեղութիւն, և այնքան միասակար կողմ պատերազմական վիճակը, երկարատեւ: բանիւրուն պաշտօնեաներու հեռացում, տեղաւորելու համար Իթթիհատի մարդիկը: Արարիոյ, Եէմէնի և Ալպանիոյ ապստամբութիւնները ի զուր, արիւն և զրամի վաւանում: վշտացան նաեւ բարեկամ տէրութիւններ: Երբ Խաւիա հռչակեց Տրիպօլի անիրաւ պատերազմը, Անգլիա, Ֆրանսա և Ռուսիա չէզոք մնացին: նշանակալից բան: Ուստի, կը յարէ Քեամիլ բաշա, Իթթիհատականները, ի սէր գոյութեան Օսմ. Պետութեան, պէտք է վարչութենէ քաշուին: ապա թէ ոչ նոր մեծ յեղափոխութիւն մը անխուսափելի է՝ կործանումէ ազատուելու համար: Անգղիոյ հետ պէտք է համաձայնութեան գաղտնիք բաց դադանի ընկերութիւնը պէտք է վերնայ, բողոքաւորական տահմանադրական կառավարութիւն մը հաստատուի: Եւրեւրոպական Ժողովոյ հակակշռին տակ որոյ կուսակցութիւնք ազատ ըլլան քննադատելու Դահլիճը: Այն ատեն նաեւ Դադլիա և Ռուսիա պիտի միանան: Ապա թէ ոչ Իթթիհատը ինչպէ՞ս պիտի կարենայ աճաբն իւրնազիրներ լուծել՝ Մակեդոնիոյ, Տրիպօլի, Կրէտէի: ուսկի՞ց պիտի կարենայ ճարկ այն ահաւոր միլիոնները որ պէտք են: Ինչպէս պիտի որդեկու Եգիպտոսի և Եէմէնի անկախութեան հռչակումը: և ի՞նչ պիտի ըլլայ այն ատեն Խալիֆայութեան ամենակարեւոր հարցը, Ռուսիոյ դերն յԱնատոլիա...: Ուստի հայրենեաց փրկութեան համար պէտք է իմաստութիւն և զսկոյութիւն: Ահա Իթթիհատի համար օգտակար մտածական մը:

Տ Ե Ղ Ե Կ Ս Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ւ Վ Մ

Այս տարի վիշտասաներորդ հարիւրամեակն է Մեղիոյանու Հրովարտակին, որով Կեծն Կոստանդիանոս պաշտօնապէս կը ճանչնար Քրիստոնէութեան ազատ դաւանութիւնը: Այս մեծ ղէպին յիշատակը, որ երեքդարեան դառնադառն հալածանաց վերջ կը դնէր եւ ի ցնծութիւն քրիստոնէայ աշխարհի կը հռչակէր սուրբ պաշտաման ազատութիւնը, կարեւորութեանը համաձայն արժանապէս պիտի տօնուի ամէն կաթողիկէներէ: Հռոմի մէջ, Ս. Խաչի ու Գալիլէի Դոմոսոս Մոնաստերիոս ըստած Ընկերակցութիւնները նախածեռնարկ եղան այս հանդէսներուն:

Վսեմաշուք Մէրի տէլ Վալ Կարդինալը զիր մուգղեց յիշեալ Ընկերակցութեան պաշտպան Վսեմաշուք Կարդինալ Դասէթթայի՝ զուրցելու համար թէ, ո՛րքան հաճելի թը-
ւած է Ս. Քահանայապետին՝ զաղաւիարը նոյնպէս «հրաւիրելու բոլոր աշխարհի կաթո-
ղիկէ ժողովուրդը ստնելու համար այնպիսի զէպք մը՝ որ, Մաքսնտիտսի դէմ Կոստանդի-
անոսի տաշած փառաւոր յաղթութեան հետեւանօք, եկեղեցւոյ տարած յաղթանակնե-
րուն նախաքայլը եղաւ: Յաղթանակներ՝ որոնց թիւը կը հաւասարի իր զէմ յարուցուած
հալածանքներուն, յաղթանակներ՝ որոնք միշտ համընթացած են իր յառաջխաղացութեան
ու ցմիշտ ալ պիտի համընթանան մինչեւ աշխարհիս կասարածը:»

Եւ իսկաւ այսպէս, կ'եզրակացնէ կարդինալը. «Խաչի յաղթանակին հարիւրամեա-
կը, Ս. Քահանայապետին փափաքին համաձայն, պիտի ըլլայ միեւնոյն ատեն թէ՛ փա-
ռաւոր ցոյց մը հաւատոյ, եւ թէ՛ ուժգին հրաւէր մը բոլոր կաթողիկէներու որ հետզհետէ
աւելի սերտիւ համախմբին առաքելական Ս. Գահուն շուրջը, ուր պիտի գտնէ ամէն որ
փրկութիւնը, կեանքը եւ փառաւոր յարութեան մը յոյսը:»

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՆԵՐ ՊԱՏՐԻԱՐԿԱՆ

*. Արհի. Իսրայէլեան Ստեփան Եպ. Խարրերդու անցեալ շարթուան վերջը հա-
սաւ հոս Վիեննայէ:

*. Գոհութեամբ լսեցինք որ Անկիւրիոյ Եպ. Արհի. Դրիգոր Դեր. Պահապանեան,
արդէն իր գործերը կարգադրած ըլլալով, ամսոյս վերջը կը մնկնի Լիվոռնոյէ, երթալու
համար իր թեմը:

*. Ինչպէս նախապէս գրած էինք, Աւագ Թեմիս Կղերանոցը բացուեցաւ եւ դա-
տեքն սկսան: Յաջորդութիւն կը մտնենք այս կարեւոր հաստատութեան:

*. Այս շաբաթ մեկնեցան Դեր. Յովս. Վ. Մոմճեան ի Հռովմ. Լեւոնեան ղաթոցի
մեծաւորի պաշտօնով եւ Դեր. Յովս. Վ. Քաջունի յեզիպտոս, տեղւոյն եպիսկոպոսին իբր
բարտուղար:

*. Նորակազմ Դպրաց դասուն երգեցողութեան եւ նօթադրութեան վարժապետ
անուանուեցաւ Մեծ. Մեհիթերեան է.Ֆ. որ սկսաւ դասախօսել:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

*. Քաղաքապետութիւնը այս անգամ ուղղակի Դում Գարուի Պատրիարքարանը
զրկած է իր էֆ-է-է-է Բանկալիի գերեզմանատան պատը փլցնելու մասին: Վարչու-
թիւնը երկու անձեր որոշած է բանակցելու համար: Ասոնք հրահանգ ստացած են՝ այն
ատեն միայն փուլումի հաւանութիւն յայտնելու եւ համաձայնելու տրուելիք փոխարժէքի
քանակի մասին, երբ էջմիածնի կաթողիկոսութենէն հրահանգ հասնի մէջը գտնուած մե-
ռելոց ոսկորները այլուր փոխադրելու: Սակայն եւ այնպէս Քաղաքապետութիւնն սկսած
է արդէն պատը փլցնելու, 12,000 ոսկի վճարելով: Բաց աստի խնդիր է գիտնալ թէ, ար-
դեօք վարչութիւնը նկատի առած է թէ, հոն կան նաեւ հազարաւոր Հայ-Կաթողիկէ ըն-
տանիքներու ոսկորներ ալ, եւ որոնց շատերուն ընտանիքները դեռ ողջ են, ու կը ճանչ-
նան իրենց սիրելիներու շիրիմները, թէեւ անոնց գերեզմանաքարերը անյայտացած են:

*. Փետր. 1 առաւ Կանուի շնչահեծ եղած գտնուեցաւ իր անկողնոյն մէջ Յա-
կոբ է.Ֆ. Սթամպուլեան, նախորդ նախարար Օտմ. Թղթատար. եւ հեռագր. վարչութեան:
Յակոբ է.Ֆ. ծանօթ գէնը մըն էր արդէն գրական աշխարհին մէջ իր Ար-է-է կեղծա-
նունով. իսկ իբր իրաւագէտ-փաստաբան մեծ համբաւ ունէր: Հազար փաշայի ղահրիմին
մէջ կոյուեցաւ նորահաստատ Թղթատար. հեռագր վարչութեան իբրեւ անդրանիկ նա-
խարարը: Իր մահը իրապէս ցաւ պատճառեց բոլոր Հայութեան:

* * Օսմ. երեսփոխանական ընտրութեանց համար կազմուած համագգալին Մասնաժողովը թէեւ երբեմն կը զուժարուի, սակայն զժտութիւնը պառակտումի ձեւ առաւ. կեդրոնը բարկացաւ եւ մեկնեցաւ ժողովէն. իսկ Հնչակեանք ինքնիշխանաբար համաձայնութիւն կատարեցին Իթիլաֆի կուսակցութեան հետ: Այս ամէնը բնաւ չեն խոստալ նար լաւ ելը մը:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

* * Պաշտօնական վեհաժողովը համար, Պետկ. Խորհ. նախագահ Սայիտ Հալիմ փաշայ եւ Դատ., թղթատարական ու կրթական նախարարներէ բաղկացած յանձնաժողովը Յուն. 31ի նիստին մէջ յարմար դատեց որ մարտ 1ին վերցուի Պոլսի պաշարման վիճակը: Սոյն առթիւ բոլոր քաղաքական դատապարտեալներու ալ ներում պիտի շնորհուի, միայն 10ի չափ անձեր անկէ չպիտի կարենան օգտուիլ, որոնց մէջ կը գտնուին եղեր Շէրիֆ (փաշա), Արաբ Իզզէթ, Ալի Քէմալ, Քեամիլ փաշայի որդին ծովային լիվա Սայիտ, Նազիֆ Սիրուրի եւն.:

* * Թուրքեանգլիական յարաբերութիւնները բարւոքած կը սեպեն այլեւս պաշտօնական շրջանակներու մէջ, մանաւանդ Սուլթանին կողմէ՝ անգլիոյ ձորմ թագաւորին տրուած Խանէտանը Ալը Օսմանի մեծ պատուանշանին առթիւ: Յարդ սոյն պատուանշանը ունեցող վեհապետներն են՝ Ռուսիոյ Զարը, Գերման կայսրն ու եգիպտոսի խըտիւր: Մասնաւոր պատուիրակութիւն մը՝ Հիլմի փաշայի նախագահութեան տակ, Լոնտոն պիտի տանէր սոյն պատուանշանը, բայց առայժմ յետաձգուեցաւ:

* * Բերա Պօն Մառշէի դիմաց Ս. Անտոն եկեղեցին քաղաքապետութիւնը սկըսաւ բռնի փլցնել: Շէնքը փլցուած պահուն, պարպուած հրազենքէ մը զլխէն վիրաւորուած է Ալի անուն գործաւոր մը երբ կ'աշխատէր վար առնուլ եկեղեցւոյ ճակատը զըտնուած խաչը:

* * Կ'ըսուի թէ ծերակուտական էքրէմ պէյի նախաձեռնութեամբ զրական կասառ մը պիտի հաստատուի՝ թուրքերէն լեզուն պարզաբանելու համար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Եպիսկոպոսներուն վերադարձը	33
Ազարեան Պատրիարքի նոր քաղաք	37
Անկիւրիոյ Եպս. ք. եւ Լիվոնոյ քաղաք	40
Քեամիլ բաշայի մէկ տեղեկագիրը	45
Տեղեկագրական	46

Ա Ր Տ Օ Ն Ա Տ Է Ր
ՅՈՎԷ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՐԵԿ-ՆԱԲԵՐԱՐԱՅԻՆ
ԳԵՈՐԳ Մ. ՎՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Ռ. ՍԱԿԱՆԱՆ
Կալաթա Գուրուցիլու խան

